# Դարձյալ սպառնալիք Հադրութին

## Ազերիները փորձում են խուճապի մատնել հայերին

Հադրութում վիճակը շարունակում է մնալ լարված: Հունիսի 11-ի տվյալներով դատարկված են 13 գյուղ: Մյուս բոլոր գյուղերից բնակչության հիմնական մասը, հատկապես կանայք, ծերերն ու երեխաները, տեղափոխվել են Տումի գյուղը, որը գտնվում է Տող գյուղից վերև և շրջապատված է լեռներով, այսինքն առավել ապահով աշխարհագրադիրք ունի:

Մի քանի օր է վերականգնողական աշխատանքները են գնում Բանազուր, Առաքյուլ, Ծամձոր և Քարագլուխ գյուղերում, որպեսզի հնարավոր դառնա գյուղերի բնակչությանը նորից իրենց տեղերը վերադարձնել:

Զինվորական պահակակետերը հանվել են Բանազուր և Առաքյուլ գյուղերից: Իսկ Տող, Հին Թաղլար և Խծաբերդ գյուղերում դրանք մնում են:

Ադրբեջանական կողմը խուճապային լուրեր է տարածում, թե 3-4 օր ժամանակ է տրված հայերին՝ Հադրութը թողնելու համար: Շրջանի զինվորական պարետ Կրավչենկոն եղել է մի քանի գյուղերում, փորձելով հանգստացնել բնակչությանը:

Ժողովրդի կողմից խիստ անվստահություն կա զինվորականների և հատափոփոխ զինվորական պահակակետերի նկատմամբ: Դաշտային աշխատանքները դադարեցված են: ■